

Յարգելի գործընկերներ

Ձեր ղեկավարած կազմակերպությունների և “Գնումների աջակցման կենտրոն” ՊՈԱԿ-ի միջև կնքված շրջանակային համաձայնագրերի շրջանակներում “Գավառի պետական համալսարան” ՊՈԱԿ-ի 2013թ.-ի կարիքների համար տնտեսական ապրանքներ գնելու համար «ԳՊՀ-ԾՅԱՊՁԲ-13/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրում ենք ներկայացնել գնային առաջարկներ:

Գնային առաջարկներ պարունակող ծրարների ներկայացման և հայտերի բացման ժամկետ է սահմանվում 2013թ-ի մարտի 30-ը, ժամը 14:30, ք. Գավառ, ՅրանտՅակոբյան 1 հասցեում (փոստային դասիչ՝ 1206):

Կից ներկայացնում ենք ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

“Գավառի պետական համալսարան” ՊՈԱԿ

Հավելված 1
«ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-13/02» ծածկագրով
շրջանակային համաձայնագրով գնում
կատարելու ընթացակարգի հրավերի

«ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-13/02» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Դ Ի Մ ՈՒ Մ

Գ ն մ ան ը ն թ ա գ ա կ ա ր գ ի ն մ աս ն ա կ ց ե լ ու

_____ հայտնում է, որ ցանկություներն ունի մասնակցելու «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2013թ.-ի համար «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-13/02» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի բոլոր չափաբաժնիներին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ`

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է` << _____ >>:

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Մասնակցի	անվանումը	(անունը)	(ղեկավարի	պաշտոնը,	Անուն	Ազգանունը)
----------	-----------	----------	-----------	----------	-------	------------

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2013 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-13/02» ծածկագրով
շրջանակային համաձայնագրով գնում
կատարելու ընթացակարգի հրավերի

Գ ն ի առաջարկ

Ուսու մնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳՊՅ-ՇՅԱՊԶԲ-13/02»
ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի
հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____ -ն առաջարկում եմ պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեքի հաշվարկ			Առաջարկված գինը /տտերով և թվերով/
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ-ն*	
1	2	3	4	5	6=3+4+5
1	ավել				
2	ձեռքի օճառ				
3	ձեռքի օճառ հեղուկ				
4	օճառ տնտեսական				
5	օդափոխիչ				
6	կահույք մաքրելու հեղուկ				
7	ռեզինե ձեռնոց				
8	ցելոֆան				
9	լվացքի փոշի				
10	լվացքի փոշի				
11	անձեռոցիկ				
12	փոշի				
13	ժավել				
14	ապակու մաքրիչ /հեղուկ/				
15	ամանի հեղուկ				

16	գորգ մաքրելու հեղուկ				
17	սպունգ				
18	բահ				
19	մարտկոց				
20	իզոլենտ				
21	Էլեկտրոնիկ ամպ 100 W				
22	Էլեկտրոնիկ ամպ				
23	Էլեկտրոնիկ ամպ 60 w				
24	Էլեկտրոնիկ ամպ 150 W				
25	Էլ.լ ամպիւժ-40				
26	դռան փական				
27	փականի միջուկ				
28	ջրի փական				
29	ջրի փական				
30	հղկանյութ				
31	Էլեկտրալար				
32	Էլեկտրալար				
33	ջրի ծորակի փականի սալնիկ				
34	պակլի				
35	Էլեկտրոնանջատիչ				
36	Էլեկտրոնվարդակ				
37	Էլ. ավտոմատ				
38	հագուստի կախիչ				
39	կողպեք				
40	դռան բռնակ				
41	դրոսել				
42	մեխ				

43	մեխ				
44	մեխ				
45	հեռախոսի միացման տուևի				
46	հեռախոսի լար				
47	ներկեւում խոզանակ /վրձին/				
48	էլ . խոց				
49	պարուրակ				
50	պարան				
51	մեխ, պտուտակամեխ				
52	Պուլիէթիլէնային տոպրակ				
53	Աղբաման մետաղական				
54	Դույլ				
55	Հատակի խոզանակ				
56	Հատակ վանաւում շորի փայտ				
57	Երկարացման լար				
58	Ճաղկաման				
59	Ճաղկաման				

***Եթե մասնակիցն ակել սցված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ սպմանագրի գծով
Հայաստանի Հանրապետության սեռական բյուջե վճարվելիք ակել սցված արժեքի հարկի
գումարը նշվում է 5-րդ սյուռնակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)
(ստորագրումը ունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՔԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՅՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՆՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**

ք. Գավառ

«-----» ----- 2013թ.

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Յակոբյանի որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և _____ ի դեմս ընկերության տնօրեն _____ (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված _____ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտել և էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Չնսել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրամասին անհասկառ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն քանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակագում մարները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Հետտանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողությունն ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է _____

(_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2

հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրություններին հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ամսվա 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառով սահմանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությանը (ՖՈՐՍ-ԱՄԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն և այլն, քաղաքական հուժգունները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությանը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գևորգի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առավելագույն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գևորգը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գևորգը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բացթողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գևորգի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գևորգի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաժամկետով մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գևորգի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գևորգ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները

կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Գավառի պետական համալսարան»
ՊՈԱԿ

ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1

«Անելիք բանկ» ՓԲԸ Պայ ազատ մ/ճ

ՀՀ 118061043626

ՀՎՀՀ 08402753

Ռեկտոր _____ Ռ. Խ. Հակոբյան

տնօրեն

Կ.Տ _____ ստորագրություն

Կ.Տ

ստորագրություն

հավելված1

h/h	Ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միավորը	Քանակը	Գինը
1	ավել	սենյակային ավել	հատ	70	
2	ձեռքի օճառ	100 գր. հոտավետ, արտասահմանյան, վախենու մեխոնավոլթյունից՝ արկղներով	հատ	400	
3	ձեռքի օճառ հեղուկ	200 գր. հոտավետ, հեղուկ, արտասահմանյան, բարձր որակի	հատ	5	
4	օճառ տնտեսական	100 գր. մուգ գույնի, վախենու մեխոնավոլթյունից	հատ	150	
5	օդափոխիչ	զուգարանի համար, ծաղիկների կամ մրգերի բույրով	հատ	10	
6	կահույք մաքրելու հեղուկ	կահույքի մաքրելու համար նախատեսված նյութ	հատ	10	
7	ռեզինե ձեռնոց	սովորական, ռեզինե	հատ	100	
8	ցելոֆան	պատուհանների համար, 1,5 և այլն լայնությամբ	մետր	20	
9	լվացքի փոշի	լվացքի փոշի 0,4 կգ Բարֆ կամ համարժեք	տուփ	240	
10	լվացքի փոշի	լվացքի փոշի 0,5 կգ Տայդ, Արիել կամ համարժեք	տուփ	20	
11	անձեռոցիկ	տեղական արտադրության, տուփերով	տուփ	500	
12	փոշի	լվացող, մաքրող միջոց /Ռակշա/ 0,32 կգ տարաներով	տուփ	250	
13	ժավել	մաքրող հեղուկ	լիտր	150	
14	ապակու մաքրիչ /հեղուկ/	պլաստման տարայով, արտասահմանյան կամ համարժեքը	հատ	60	
15	ամանի հեղուկ	արտասահմանյան կամ համարժեքը	հատ	180	
16	գորգ մաքրելու հեղուկ	հեղուկ՝ տեղական կամ արտասահմանյան	հատ	5	
17	սպունգ	երկողմանի կոշտ, արտասահմանյան կամ համարժեքը	հատ	100	
18	բահ	նախատեսված ձև մաքրման համար, փայտյա պոչով	հատ	4	
19	մարտկոց	միջին չափի, 1,5 Վ., նախատեսված պատի ժամացույցների համար	հատ	100	
20	իզոլենտ	արտասահմանյան կամ ռուսական	հատ	20	
21	էլեկտրոն ամպ 100 W	լամպ 100W, արտասահմանյան կամ համարժեքը	հատ	200	

22	Էլեկտրոնիկ ամպ	հզորությունը 60W, արտասահմանյան կամ համարժեքը	հատ	200	
23	Էլեկտրոնիկ ամպ 60 w	կախովի առաստաղի	հատ	100	
24	Էլեկտրոնիկ ամպ 150 W	լ ամպ 150 W	հատ	80	
25	Էլ . և ամպիւթ-40	Էլ . և ամպիւթ-40 ցերեկային 120 սմ	հատ	50	
26	դռան փական	ներքին տեղադրման, արտասահմանյան կամ համարժեքը	հատ	10	
27	փականի միջուկ	բրոնզե, չափսը երկար, որտասահմանյան կամ համարժեքը	հատ	20	
28	ջրի փական	չափսը 1/2 դույմ արտասահմանյան կամ համարժեքը	հատ	20	
29	ջրի փական	չափսը 1/2 դույմ, 15 սմ, ջեռուցման մարտկոցի համար	հատ	35	
30	հղկանյութ	փայտի և երկաթյա պարագաների հարթեցման համար	մ	10	
31	Էլեկտրալար	չվառվող,	մ	100	
32	Էլեկտրալար	ՊՊՎ 2,5մմ	մ	100	
33	ջրի ծորակի փականի սալ նիկ	արտասահմանյան արտադրողն է, կոմպլեկտով տարբեր չափերի	հատ	10	
34	պակլի	քզբար, ջրատարի ամրացման համար	հատ	10	
35	Էլեկտրոնանջատիչ	Էլեկտրոնանջատիչ ներքին տեղադրման, արտ. մեկ տեղանի կամ համարժեքը	հատ	30	
36	Էլեկտրոնավարդակ	Էլեկտրոնավարդակ ներքին տեղադրման, արտ. կամ համարժեքը	հատ	30	
37	Էլ . ավտոմատ	63 Ա, արտասահմանյան արտադրողն է	հատ	10	
38	հագուստի կախիչ	6 կամ 8 տեղանոց, հագուստի համար	հատ	30	
39	կողպեք	արտասահմանյան արտադրողն է, 3 կամ 5 բանալիով	հատ	5	
40	դռան բռնակ	արտասահմանյան արտադրողն է, գույն	հատ	6	
41	դրոսել	Էլ . և ամպի, արտ. արտադրողն է	հատ	40	
42	մեխ	պողև տակամեխ, դյուբիլ	հատ	250	
43	մեխ	35x2մմ, սովորական	կգ	5	
44	մեխ	100x4մմ սովորական	կգ	5	
45	հեռախոսի միացման	երկտեղանի, պլաստմասե	հատ	10	

	տոււ փ				
46	հեռախոսի լար	հեռախոսի տեղադրման համար	մ	100	
47	ներկելու խոզանակ /վրձիկ/	բնական մագերով միջին չափսի	հատ	10	
48	Էլ . խոց	вилка, հոսանքի սարքավորման համար	հատ	25	
49	պարուրակ	спирал, տաքացուցիչի համար	հատ	15	
50	պարան	ջեռուցման փականների համար	մ	5	
51	մեխ, պողտակամեխ	болт и гайка, ուսանողական սեղանների երեսների ամրացման համար	հատ	200	
52	Պոլիէթիլենային տոպրակ		կգ	25	
53	Աղբաման մետաղական	մոխրամանով, տրամագիծը՝ 20սմ	հատ	6	
54	Դույլ	11լ ., պլասմասայե	հատ	10	
55	Հատակի խոզանակ	գոգաթիով	հատ	20	
56	Հատակ վանալ ու շորի փայտ	հատակ վանալ ու շորի համար, փայտե	հատ	20	
57	Երկարացման լար	երեք տեղ, 5մ.	հատ	10	
58	Ծաղկաման	3լ ., պլասմասայե	հատ	30	
59	Ծաղկաման	5լ ., պլասմասայե	հատ	30	

Գ Ե Ո Ր Դ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Գավառի պետական համալսարան»
ՊՈԱԿ

ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1

«Անելիք բանկ» ՓԲԸ Պայ ազատմ/ճ

ՀՀ 118061043626

ՀՎՀՀ 08402753

տնօրեն

ռեկտոր

Ռ. Խ. Հակոբյան

Կ.Տ

ստորագրություն

Կ.Տ

ստորագրություն

Հավելված N 2

<< >> << >> 20 թ. կնքված

,N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒ ՅՑ

ՀՀ դրամ

Հ / Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 20 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1													
Ընդամենը				X		X		X		X		X	

ԳՆՈՐԴ

ԿԱՃԱՌՈՂ

/ստորագրողի անուն/

/ստորագրողի անուն/

Կ.Տ

Կ.Տ

Հավելված N 3

<< >> << >> 20 թ. կնքված

,N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 թ.՝ ըստամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	ոկտոբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* Վճարման ենթակագույմարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրողը ունի/

/ստորագրողը ունի/

Կ.Տ

Կ.Տ

Հավելված N 4
 << >> << >> 20 թ. կնքված
 ,N _____ ծածկագրով
 գնման պայմանագրի

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ
 ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1
 Հ/Հ 118061043626 Աճելիք բանկ ՓԲԸ
 Պայագատ մ/ճ
 ՀՎՀՀ 08402753

Կ.Տ _____ Ռ. Խ. Հակոբյան

 Կ.Տ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ____
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_____» 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ « տն տե ս ակ ան ապր ան ք ն ե թ ի » գնման պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «----» «-----» 2012թ.

Պայմանագրի համարը՝ -----

Գնորդը, ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի և Վաճառողն՝ ի դեմս տնօրեն _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «__» «_____» 2013թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» «_____» 2013թ-ից «__» «_____» 2013թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարարումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	-----	-----	-----	-----

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքն ընդունեց

 (ստորագրություն)
 ազգանուն _____

Ապրանքը հանձնեց

 (ստորագրություն)
 ազգանուն _____

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Երևան _____ 2013 թ.

-----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ (Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1. Հաշվի առնելով, որ Ընկերությունը հաղթող է ճանաչվել “Գավառի պետական համալսարան” ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված տնտեսական ապրանքներ ձեռքբերելու նպատակով հայտարարված -----
----- ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնման ընթացակարգի կիրարկման արդյունքում, պայմանագրի կնքման համար պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակի և ամբողջ ծավալով պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1. Պատվիրատուի կողմից կազմակերպված N -----ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնման ընթացակարգի կիրարկման արդյունքում կնքվելիք “Գավառի պետական համալսարան” ՊՈԱԿ-ի կարիքների համար ----- պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ (պայմանագրի գնի 10%) ----- (-----) << դրամի չափով:

1.1.2. Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1. կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի զանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3. Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով զանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1. կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող ----- կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է -----ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով զանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 2013 թվականի -----ը ներառյալ :

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները.

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Ընկերությունը _____

Հասցեն _____

բանկ _____

Հ/Հ _____

ՀՎՀՀ _____

Տնօրեն _____

/անուն, ազգանուն/

/ստորագրություն/

Գլխ. հաշվապահ _____

/անուն, ազգանուն/

/ստորագրություն